

ՎԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	12 Ֆր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	15 »
Սրճառահեմակի համար տարեկան	8 »
Վեցամսեայ	»

Անկերիկայի համար	3 զր.
Տարեկան	4.50 »
Վեցամսեայ	»

Մանուցում սոյր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակարկել է. երեսին անկերիկայի համար 20 0/0 վեղջ կը լայն վառարկի համար 27 ռֆ. 10 սակարկել

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԴՏՄԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկին հարազտութեան համար չի լին

Редакция на вѣстникѣ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արճառահեմակի համար ձեռքի ( 20 ՍԱՆԹԻՄ ) Պոչխարիոյ համար ձեռքի ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք եւ չեւ տրուիր

ՎԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒՄՈՂԸ ԲԱՃԱՆԿԻՆԸ ՊԵՏՔ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

## ԴԱՃՈՅՆԻՆ ԱՈՋԵԻ

Փլատութեան, անկուշտ ու անաչառ արծաթաթուղթեան կուղէք գլուխ գործոցները տեսնել:

Կուղէք ձեր յիշողութեան մէջ ունենալ պատկերը հողիներուն անոնց որոնք ոսկիին պաշտամունքին նուիրուած՝ կը դիպեն ու կը դիպեն առանց նպատակի, առանց սուրբ ըզձանքներու, առանց խղճմտանքի:

Կուղէք վերջապէս ճանչնալ սրտեր, ապառաժէն ալ կարծր, որոնց վրայ թշուառութիւնը ծիծաղ, տանջանքը հեզանք կազդէ միայն, որոնք անզգայ սրտի բոլոր հանրութեան, խղճի բոլոր յուզումներուն, արհամարհանք ունին լոկ շրթներուն վերայ, երբ դրամէն տարբեր իւրի մը վրայ խօսելու համարձակութիւնն ունենաւ իրենց հետ:

Գնացէ՛ք հայ հարուստին քով ու պիտի գործուրիք: Խրատէ, սաստէ, յուզէ, փոթորիք, սպառնացիր նոյնիսկ ինչ ոգուտ. — դէմդ դիակ մըն է կեցած, ցուրտ ու անշարժ, խոլային զանգուած մը աղտոտութեանց մէջ գայարուն, որ չզգար, չի հասկնար քու հոգիդ, չըմբռնէր քու սիրտդ և իր զըրամակերպին ու վաճառականի զըձուռն ունեցողութիւններուն կառչած՝ կը համարձակի նոյնիսկ գրան ծամբուն քեզի ցուցնել վերջապէս:

Տասնեակ տարիներ է որ հայ յեղափոխութիւնը հարուստին կը քարոզէ լայն աշխարհայեցողութիւններ, կը հրաւիրէ շայն որ աչքը դարձնէ անգամ մը դէպի Արեւելք, հոն՝ ուր իր նախնիք երբեմն ապրեր ու փառքեր հիւսեր են, հոն՝ ուր այսօր իր արեւակիցները կը տանջուին կը ջարդուին, կը հալածուին, հոն՝ ուր նոյն իսկ իրեն՝ համար ալ օր մը փառքի օրեր կը սպասեն գուցէ:

Բայց հայ հարուստը անոնցմէ

չէ որ նշանակութիւն տայ այդ ձայնին: Տգէտ, կոպիտ, ծայրայեղօրէն կարծառեւ ու շահասեր, ան կը մերժէ ամէն ձեռնտուութիւն որ իր անմիջական շահուն հետ կապ չունի: Ոչ մէկ ազգի մէջ, ազատագրութեան ճիգերուն գերագոյն վայրկեանին հարուստը այնքան անտարբեր, այնքան անխղճօրէն ժլատ չէ եղած, որքան հայ հարուստը: Չա՛րկ, սպաննէ՛, հոգին ա՛ռ, ահաբեկիչին գաշոյնին առջեւ անարգաբար կը մեռնի ու դրամ չի տար: Յեղափոխութեան սկիզբները, երբ դեռ նորութիւն մըն էր այդ անունով հանգանակութեան դիմելը, հայ հարուստը գուցէ կարգաբանար իր պոչպանողական բնազդներուն պատճառաբանութեամբը: Բայց տասնհինգ տարուան մէջ հայ հարուստը ականատես եղաւ բազմաթիւ յատկանշական երեւոյթներու որոնք ցոյց տուին որ հայկական շարժումները անցողական բաներ չեն, այլ պիտի յարատեւեն մինչեւ իրենց նպատակին իրականացումը: Եւ սակայն դեռ այսօր հարկ կը ըլլայ ահաբեկիչ գործողութիւններ կատարել հայ հարուստին վրայ, ստիպելով որ գաշոյնին առջեւ խոնարհի վերջապէս, կամ կեանքը տայ, կամ դրամը:

Չայրոյթի, կատաղութեան վայրկեանի մը մէջ, ահաբեկիչը, աչքերը հրացայտ, կուրծքը թատուռ, կը ներկայանայ անոր ու մէկ հարուստով գետին կը տապալէ զայն: Բայց երբ ինքնամփոփումի պահուն կանդրադառնայ այդ երեւոյթին վրայ ու կը խորհի թէ այս ճգնաժամային րոպէներուն դեռ Հայեր կան, որոնք իրենց դրամին շատ աւելուրդ մասն անգամ կը զլանան բերելու Յեղափոխութեան գանձարանին, որոնք կը ստիպեն կազմակերպութիւնները թանկագին կեանքեր յատկացնել այդ գործին, երբ պէտք էր որ այդ կեանքերը սեղծօրէն միացան իրարու, բո՛ւն թշնամիին գէժ կը

ուռելու երթային, այդ սրտոտ ահաբեկիչները գուցէ կը յուսահատին պահ մը ու կը զլուին այդ տեսակ զուակներ իր գիրկ պահող ազգին համար անձնագոհ ըլլալու:

Բայց, ինչպէս կը տեսնուի, այս երեւոյթը ճակատագրական է հայ ազգին համար: Հայ հարուստը միմիայն ահաբեկիչի դաշոյնին առջեւ պիտի խոնարհի ու իր քսակին բերանը բանայ: Ոչ բացատրութիւններ, ոչ օրինակներ և ոչ նոյնիսկ իրեն շահը պատկերացնող դիտողութիւններ օգուտ չի պիտի ունենան մեր հարուստներուն համար, և յեղափոխական կազմակերպութիւնները հարկադրուած պիտի ըլլան գաշոյնը ձեռին դիմելու հարուստին, միանգամայն զլլուելու զարհելու և դրամը առնելու համար:

### ՎԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻՍՏՐԸ

— 0 —

### ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆԻՆ ՀԱՒԱՏԲԸ

Անցած անգամ կուռղ յեղափոխականին գործովն ու խօսքովը ցոյց տուի անոր անխախտ հաւատքն ու համոզումը դէպի հայ իրականութիւնը, զէպի կեանքի գծած ուղին, զեռ 1897 թուականին՝ երբ հայ բնիկ հանուր աղէքներէն ետքը, կուռղ ֆէդային իր շուրջը, երկրի մէջ կը տեսնէր լքում:

Անցաւ տարիներ. սեւ, արիւնտ ու աւերումի տարիներ երկրի ժողովուրդին համար, իսկ ձեռքազմեալ եւ վերակազմեալ ազգասպանութեան՝ ու հակայեղափոխական քարոզիչ տարիներ արասասանմանի ժողովուրդին համար...

Երկրի յեղափոխականը իր ուժերը հաւաքեց, երկրի ժողովուրդը ճանչցաւ իրականութիւնը, իր թշնամին ու բարեկամը գիտցաւ, յեղափոխականին անձնորացութեան օրինակը ունեցաւ իր աչքին առջեւ և անոր փառքեալ, անոր ետեւէն երթալու ճիգ ըրաւ:

Ասդին արտասահմանի մէջ, կըռուղներու ընկերները՝ իրենց գրչով կուռ մղեցին հակայեղափոխական եւ խարկակի ազգադար սիսեմին գէժ:

Ասոնք սկանչուին լուսին հայրենիքի հողի վրայ ինչո՞ղ եւ ապրող հերոսներու հասցէին վատարար նետուած ամենէն ազոտոտ, ամենէն գարշելի մակդիրներն ու հայհոյանքները: Ասոնք հասկցան, լաւ մը համոզուեցան թէ արտասահմանի կարգ մը թրքացածները ինչպէս կը գնահատեն ինչո՞ղներու գործը եւ ամբարխին մէկ մասը ո՞ր աստիճանի գիտակից է շարժաթանները, փարսեցիներն ու խաչագողները զանազանիւն մէջ իրական գործիչներէն զոհողներէն:

Աս ամենը տեսան, անոնց դէմ նոյնիսկ հոս, արտասահմանի մէջ պայքարեցան — ու նորէն գնացին տառապանքի վայրը...

Եւ ահա ատոնց ալ համոզումը:

«Ամէն անգամ կը գրէ երկրէն գործիչ մը 1902 մարտ 26ին — որ երկրի մէջ ու եւ է կէտի մը մը վրա յեղափոխական կարեւոր ձեռնարկ մը կը կատարուի, եւ կամ դէպք մը տեղի կուենայ, արտասահմանի հայութեան մէջ յուզում մը եւ մեծ իրարանցում մը սուս կուգայ եւ ընդհանուրին ուշադրութիւնը կողուի դէպի երկիրը եւ յեղափոխական գործը: Միշտ անգամ այն թմրած ուղեղները ու տկարացած սրտերը, որոնք երկար ժամանակ լուռ ու անտարբեր կը մնային յեղափոխական քարոզիչներուն, եւ սկեպտիկ շարժումներով կը պատասխանէին իրենց եղած դիմումներուն՝ կատարուած հերոսական իրողութեանց առջեւ յեղափոխական կը ցնցւին եւ վայրկեանական խանդավառութիւնով մը կը լեցուին, անշուշտ մերձաւոր քոչչողուն, յաջող ազատագրութեան մը յոյսերով գինովցած:

Բայց շատ կարճ կը տեւէ ոգեւորութեան այս շրջանը. ու յաջողութեան օրերուն երբ կը յաջողեն դժբաղդութիւնները, երբ մեր հարցը դիւանագիտական ձախողուած մը կը ըլլէ եւ կամ երկրի մէջն ու դուրսը յեղափոխական գեղձում մը նշմարուի, կը դադրի, կը մարին այդ վայրկեանական խանդոտ ծափերը. երկրի ներսը նպաստ հասցնելու փութկոտութիւնը ու նորէն երկրի մէջ գործիչն ու գործը միմիայն կը մնան իրենց անագորոյն թշնամիին եւ անհամար դժուարութիւններու հետ:

Եւ ինչ որ աւելի գէշն է, ալդ քաջալերող, նպաստող կարճատեւ շրջանին կը յաջողեն անվստահութեան ցաւազարջոյցեր: Հայհոյութեանց կոյր, յիմար արշաւանքներ, Ասի սովորական առաձիգ երեւոյթ մըն է եւ բնական դարձած մեր յե-

զափոխական թէեւ կարճ, բայց տա-  
ժանելի շրջանին համար:

Պէտք կ'այ որ այս բաններս հաս-  
տատու համար զիջեմ փաստերու,  
զեւ շատ մօտիկ է մեր անցեալ տաս-  
նամակը: Ամէն ոք ծանօթ է մեր  
յեղափոխական անցեալ գործունէու-  
թեանց եւ ուղղը կրնայ ինքնին  
թեթեւ ակնարկ մը նետել անոնց վը-  
րայ ու համոզուիլ եթէ երբէք հարկ  
կայ տասնեակ թերթերուն յար-  
տատանանի հայտնեան մէջ, որոնք  
իրենց կարճ ու երկար կեանքին մէջ  
իրենց հայելի անկեղծօրէն կը ցոյց-  
նեն մեր ժողովուրդի այդ բնորոշ ու  
զին եւ միշտ երէկի պաշտուածը այ-  
րուած է յաջորդ օրը:

Առանց հոգեբանական վերլուծու-  
թեանց զիջելու, գտնելու համար  
միկրօթերը մեր ժողովուրդի փոփոխ-  
մանութեան, անոր հայրենասիրա-  
կան խանդին բարեխառնութեան, ա-  
րաք երեւելին, արձանագրենք մի-  
այն տիւր երեւոյթը, որ իր ա-  
ռածակնան բնաւորութեամբ կը թու-  
նաւորէ գործին սրբութիւնը եւ կը  
խանդաբէ անոր յարատեւ յառաջի-  
մութիւնը:

Մենք, երկրի մէջ գտնուողներս  
երբէք վախ չունինք արտասահմանի  
հայ գրչակներէն. մէկ նպատակ  
միայն ունինք, այն է՝ որ առաջ  
վերջ մը տալ հայ ազգի կրած անլուր  
սառապանքներուն եւ տեսնել զանի  
ազատութեան ճամբուն վրայ:

Թող գրեն ասոնք, թող իջնորդ-  
միս ուտեն... Որքան լաւ ուսումնա-  
սիրած է երկրի մէջ գտնուող գործիչը  
արտասահմանի աստիճանին տրամա-  
բութիւնները եւ շարախաններու  
գեղը... եւ որքան լաւ կը պատշաճի  
այ վերի սողորուն ոգին Աստուծի  
կախնեցուն առիթով արտասահմանի  
մաս մը սյուսահատաներուն մէջ ա-  
ռաջացած արամադրութեան կը ցա-  
ծողներունը բարձրացուցած շնական  
հաջողներուն...

Եւ այս վարկեանին երկրի մէջ  
թշնամիին դէմ կուրծք պարզող,  
վէրք սուտող վէրք առողջ հայու կը  
շատ լաւ գիտէ թէ իր գիւցազնական  
կռիւները ինչ սրտեր կը յուզէ, կը

խանդաբաւէ, ինչ թուլասիրտներ  
կը վախցնէ եւ ինչ աղտոտ, հոտած  
թրքական բերաններ բանալ կուտայ:  
Թող գրեն կուտող հայրու կը, բայց  
կը կուտուի... Թող գրեն ասոնք,  
թող իրարու միս ուտեն:

Հարեւար որ փաստերէն երկու հաս-  
մէջ բերի, ցոյց տալու համար որ,  
արտասահմանի «ազգասպան թելադ-  
րանները», «աղմուկները», «լքում-  
ները» եւ «մեռելութիւնները» չեն կր-  
նար, ու չի պիտի կրնան երկրի յե-  
ղափոխական գործիչին վրայ ազդել  
ու կասեցնել գործը:

Ամբոխային յուսահատութիւններն  
ու լքումները, ազգադաւ հայնոյանք-  
ներն ու սաղաքները շատ շատ  
նպատակ գործին պոտիկ զանգաղու-  
թիւն մը պիտի կրնան տալ, բայց  
երբ նկատի առնենք որ, ամենէն ա-  
ւելի վայոց բարձրացողները, ամե-  
նէն աւելի յուսահատուողներն ու քննա-  
գատողները ամենէն աւելի թէ բա-  
րոյական է թէ նիւթական չգրողու-  
թիւն յանձն շտնողներն են, և կամ  
ամենէն մեծ խանդաբաւութեան օրե-  
րուն մէջ միայն մտաբերած են կուտ-  
ղին գանձանակը փամփուշտի մը զը-  
րամ ձգել, այն ասոն շատ ալ մեծ  
բան մը չի տուած որո՞րք երկարատե-  
կամ կարճատեւ ամբոխային խարխա-  
լութիւններն և յուսահատութիւններն:

Յեղափոխական գործը սակայն ամ-  
բոխին տրամադրութիւններովը չէ որ  
պիտի քայլէ, որ հովը փչաց կողմը կը  
ծոխի, որ ամենէն զգուշիկ սրբապղծու-  
թիւններուն օսմէնս կրէ...

Յեղափոխական գործը պիտի տանի  
իր կ'անցըր աս գործին մէջ գնողը:  
Իրականութիւնը անոր ուղին գծած  
է. ան գիտէ թէ օրիկ պիտի քայլէ:  
Ո՞վ է այն յիմարը որ կ'ողգէ կեան-  
քի ընթացքը կաւեցնել:

Մեծ յիմարութիւն է ուրիշն որ  
կարգ մը միամտներ, յուսահատներ  
իրենց անպարտաճանաչութեամբն ու  
լքումներովը վերակազմել և նորա-  
կազմել ազգադաւ վատերու ժառան-  
գած զափոխներուն կը նախանձին:

Թող գրեն ասոնք, սրտի տէր հա-  
յերը թող մտիկ ընեն միայն երկրի  
ձայնին:

— Ամէն բանէ առաջ պէտք ունինք  
ժողովուրդին օժանդակութեան, զէն-  
քի, վաստի, գնդակի...  
Յիշիպէ ԺԻՐԱՅԻ

ՃԱՐՈՆՅԻ ԼՐՏԵՍՆԵՐԸ

—(—)

«Նարժում»-ի ընթացողները  
սրբէն ծանօթ են ճարտնցի այն  
երկու լրտես սպաներու հետ, ո-  
րոնք կամուրջ մը օղը հանելու  
գործողութեան մէջ ձերբակալ-  
ուած էին կողակներէն և Մուկ-  
տէնի մէջ գնդակահարուած: Ռու-  
սական թերթերը այժմ հրատա-  
րակիր են անոնց իրենց բնա-  
նիքներուն գրած վերջին նամակ-  
ները:

Ահա գնդապետ Եփրեմի նամա-  
կը իր երկու սրբիներուն, որ  
ինչպէս կը յիշէք կրօնքով քրիս-  
տոնեայ էր:

Սիրելի զաւակներս,

— Մեր ինքնակալի հրամանով ձեր  
հայրը Մանջուրիս հաւա, բայց իր  
մտադրութեան մէջ կը յաջողեցաւ:  
Ռուս զինուորները զիս ձերբակալե-  
ցին, և ես դատաւարուած եմ մահ-  
ուան: Գնդակահարութեան ազիւ-  
մանուան, որու հանդէպ այս վայրկ-  
եանին կը գտնուիմ, ձեռնապահ  
այսպէս կամեցաւ, այսպէս էր գըր-  
ուած: Դուք կրկնակի ռուսիս պէտք է  
ըլլաք, որ ձեր հայրը կը մեռնի հա-  
ւատարիմ դէպի հայրենիքը ունեցած  
պարտականութեանը: Ծարունակեցէք  
լաւ սորուիլ... յարգեցէք ձեր մայրը...  
լաւ մարդիկ դարձէք... ուրիշ բան  
չունիմ բնիք... կառավարութիւնը  
կը հօգայ ձեր և ձեր մօրը ապագան:

Պուտիստ Եփրեմի սպայի նա-  
մակը իր ծնողաց:

Հայրս,

— Մանկութենէս ի վեր դուք

այնքան խնամք տարիք վրաս, զիս  
այնքան սիրեցիք, և սակայն ես ու-  
նեցով չը կարողացայ ձեր բարու-  
թեանը պատասխանել: Մինչեւ իսկ,  
քանի ես հասակս կ'առնէի, այնքան  
աւելի ձեզ հոգ կը պատճառէի: Վեր-  
ջապէս այժմ ճակատ ճակտի եմ կա-  
նա՞ծ իմ դժբախտ ճակատագրիս հետ:

Իմ բարձր մտադրութեամբ թափա-  
ռեցայ Մանջուրիոյ մէջ, և բնկայ  
առանցեալ ձեռքը: Հինգ վայրկեակ  
պիտի մեռնիմ: Ոչնչէ չեմ անչնար, ու-  
րովեցեալ հայրենիքի համար կը մեռ-  
նիմ: Իմ միակ ցաւն է, որ չը ար-  
կացայ նպատակիս հասնիլ... վեր-  
ջին վայրկեաններուն է, որ ձեզ ի  
գրեմ սիրելի ծնողս... մտայնեք զի-  
հանեցէք զիս ձեր սրտէն...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Տարսման 9 Յուլիս

Քաղաքիս մէջ ահաւելի կող-  
պուտներն ու աւազակութիւնն-  
րը օր օրի կը շատնան: Մենք կը  
կարծէինք թէ աւազակները լիու-  
նեցան մէջ կը գտնուին և գաղ-  
տուկ կը գործեն, սակայն մոռ-  
ցեր էինք, որ աւազակներու գըր-  
խաւորը կարմիր Ռուսներն է, և  
որ կը գործէ օր ցերեկով: Իրեն  
սպիկարութեան և բարբարոսու-  
թեան շնորհիւ սովամահի դատա-  
պարտուած օսմանեան ստորաբաշ-  
կաւազարութիւնը՝ գարշելի գո-  
յութիւնը քանի մը օր աւելի եր-  
կարացնելու գիտումով նոր  
տուրքի հրամաններ կը հանէ, ա-  
նօթի շատ մը պէս թալկուած ժո-  
ղովուրդի ձեռքէն հացի վերջին  
կտորը խլելով: Եւ ահա անօթի  
ցած պաշտօնեաները ընկած խա-  
նութէ խանութ, տունէ տուն,  
սրճարանէ սրճարան՝ նոր տուրքը  
կը հաւաքեն թուրքին յատուկ ձե-  
ւերով ու միջոցներով:

\*ՀԱՅՐԵՆԻԻ ԳՂԱՓՈՐԸ\*

—(—)

(Հնչիմակ Միխայիլ Վառանդեան,  
պագրութիւն Հ. Յ. Իսախանի.)

—(—)

Ներկայի հրամայական պահանջ-  
քին անդի տալով, ընկերվարութիւ-  
նը իր ծրագրին մէջ ընդունած է  
նաեւ «ազգերու ինքնավարութեան  
սկզբունքը»: Այդ կուսակցութեան  
գրեթէ բոլոր հեղինակաւոր ղեկավար  
իջեանց ձայնը տուած են ինչպստ  
ազգային ինքնավարութեան: «Վա-  
րանդեան մագնաւորապէս կը ծանրա-  
նայ այս կէտին վրայ, ցոյց տալու  
հաճաք հակապարտութիւնը, որ կը տի-  
րէ կարգ մը ընկերվարական կուսակ-  
ցութիւններու մէջ, մանաւանդ գեր-  
մանականներուն՝ որոնք լեհական  
ինքնավարութեան եւ լեհական դա-  
ւաաններու վրայ ի գործ գրուած ճն-  
շումներուն առջեւ անտարբեր, նոյն-  
իսկ լեհական գործակից կը հանդի-  
սանան: Երկրի մը մէջ ուր ընկեր-  
վարութիւնը իր անեղն հօր ար-  
տայապարտութեան հասած է, գոնէ առ-

երեւոյթս, քանի որ կրնայ Ռայխս-  
սակին տալ 80 պատգամաւոր, պէտք  
էր որ նորագոյն զաղափարներու եւ  
ազատութեան ամենամեծ չափ մը ա-  
պահոված ըլլար, և յարգուէր գո-  
նէ տարբեր ազգերու լեզուն, յիշա-  
տակները, զգացումները: Գնդա-  
կառակը, աւելի շատ ճնշումներ, ա-  
ւելի չի աննուած անիրաւ օրէնք-  
ներ են որ կը հարստատին լեհացին  
իր հայրենիքէն զրկելու, իր լեզուէն  
զրկելու համար: Ոչ մէկ սահմանադ-  
րական երկիր իր հպատակներուն  
հանդէպ այնքան բռնաւոր չէ որքան  
Վերմանիան Լեհներուն հանդէպ, հա-  
կատակ իր մէջ պարունակած ընկեր-  
վարականներու անսահման թփուրն:

Լեհ ազգութեան արժանիքը ան-  
եղաւ որ, հակաբակ ամէն ապօրինի  
ճնշումներու, կրցաւ իր արժանա-  
պատուութիւնը պահել, և առանց  
բռնաւորին պէս ստորանալու մղել  
իր ինքնազոյութեան կոտոր: Լե-  
հաստանն ալ իր անկախ ընկերվա-  
րական կուսակցութիւնը հիմնեց,  
որ լսուլ կոտոր սկսաւ գերմանականին  
հետ: Իր դերը մեծ եղաւ Լեհաստա-  
նի մէջ, ոչ միայն իբր տնտեսական  
ժողովուրդ կազմակերպից, կրթից  
իր բրովիթարիան, այլ նաեւ անոր

տուաւ հայրենասիրութեան ստող  
ոգին:

Պ. Վարանդեան յետոյ կանցնի Ռու-  
սաստան առական ընկերվարութեան  
վիճակը պարզելու համար: Հոն ըն-  
կերվարականները աւելի ազնիւ եւ  
իրենց զաւանձններուն աւելի հա-  
մապատասխան գրութեան մէջ կը  
գտնուին: Ընկերվարական-յեղափո-  
խական կուսակցութեան օրկան Ռե-  
րտնայա Վոլիանն ամէն տարի եւ  
որոշապէս յայտարարած է իր յար-  
գանքը ազգերու ինքնավարութեան  
եւ ազատ զարգացման համար: Այ-  
սօր «Նարժում»-այ Վոլիանն յաջորդող  
Ռէվոլյուցիօնայա Բոսիան թերթը  
նոյն ուղղութիւնն է որ կը շարու-  
նակէ Ռուսաստանի մէջ: «Մենք գը-  
րուած ենք մեր զրօշակի վրայ ազգու-  
թիւններ լիակատար եւ անպայման  
իրաւունք իրենց վիճակը տնօրինե-  
լու:

Պ. Վարանդեան այսպէս ընդեր-  
կար որոշել ետքը ընկերվարութեան,  
միջազգայնութեան եւ ազգային ինք-  
նավարութեան յարաբերութիւնները,  
կանցնի Ռայխական կուսին ղիբը  
որոշելու անոնց մէջ: Այս առիթը  
յարգու հեղինակը նախ կը վերջիչէ

Ամէն մէկ կողակար և դերձակ, եթէ խանութին մէջ մեքենայ մը ունին, պարտաւոր են նոր օրէնքի հիման վրայ տարեկան 20 դուրոյ տուրք վճարել, իսկ տուններէն 10 դուրոյ: Սրճարաններու և տուններու մէջ նկարներու, նկարներ պարտաւոր է ամէն մէկ նկարի վրայ 2 դուրոյնոց դրոյժ վակցնել, ինչպէս և խաղի թուղթերու վրայ՝ 10 վարանոց: Արշաւանքը սկսուած է, և արիկայ պաշտօնեաները սովալուկ գայլերու վտճմակի մը նման ընկած խանութ խանութ, տունէ տուն մեքենայ, նկար և ուրիշ բաներ կը փնտրեն, մեծ յուզում և կատարեցող հետեւանքներ առաջացնելով... Եւ ի վրոյն ամենայնի, փողոցներու մէջ շրջող հասերն ալ կը հաւաքուին, անոնք ալ նոր տուրքին պիտի մասնակցին՝ հազարէ 10 նական փարա վճարելով:

Ամէն մէկ բնական և արուեստական շահագործումի ճամբաները ժողովուրդի առաջ փակած, անոր որ և է բարոյական աջակցութիւն չը տալով հանդերձ՝ իր վայրենի ու յետադէմ բէժիմի շնորհիւ հազարաւոր ուժեղ բազուկներ ու գլուխներ անգործութեան դատապարտուած թուրք գաղութ կառավարութիւնը: Գեռ միջոցներ կը փնտրէ ազատ ու անգործ ժողովուրդի արիւնը ծրծելու...:

Ահա և օրինակ մը, թէ ժողովուրդի զբոսը իր սողունի կեանքը ապահովող հայրախնամ թուրք կառավարութիւնը, որքան կը հետաքրքրուի նոյն այդ ժողովուրդի ազնաներով: Ամսին

Յին ժամը ցերեկուան 12ին յունական դպրոցին մօտ Եէնի մահալլէ կոչուած թաղին մէջ հրդեհ ծագեցաւ: Յունական շորս հինգ տուններ բոցերու մէջ էին, խեղճ տանտէրերը և դրացիները օգնութիւն կազմակերպեցին: Թուրք կառավարութիւնը անտարբեր հանդիսատես էր այս բոլորին, և իժի ծնունդ թուրքերը — «գո՛յն անսըն կեանքով» — կը մըրթ մըրթային: Յունական հրդեհաշէջ մեքենան տարուեցաւ, և կրակը, փչած աստիկ հովին շնորհիւ, սկսաւ աւելի մեծ ծաւալ ստանալ, և մինչեւ իսկ քամին սկսաւ կրակի կտորներ նետել նաեւ տօճկական թաղը վտանգելով: Այս պահուն միայն շնորհիւ ապահովագրութեան ընկերութեան, հրապտօններու և թուրքերու գիւմարի ու պահանջի, բերդերէն զօրքեր դուրս հանուեցաւ և կառավարական մեքենաներով շատ տուններ փչցնելով ու աւերելով՝ վերջապէս յաջողեցան կրակը մարել յաջորդ օրը ժամը առաւօտեան 10ին: Հրդեհի պահուն սըրտածմիկի պէտք մը պատահեցաւ, և կղզիկ մը որ անկապին մէջ կրակաւ կը քնանար՝ զգալով տան կրակ առնելը, նոյն վիճակով դուրս վաղցեց և յաջողեցաւ անվնաս փողոց ելլել, բայց ընկաւ թուրք զօրքերուն մէջ, որոնցմէ մէկը զայն գետին զարնելով կուզէ պատիւ բռնաբարել, աղջկայ ստակալի աղաղակներէն հոն գրտնուող հայ հրդեհաշէջները վրա վազելով կ'ազատեն շան ձեռքէն աղջիկը: Ուրիշ աղջիկ մը ազատեցնելու և սակեալ զարդարանքները կուրծքին վրայ տեղափոխելով կը յաջողի կրակներու մէջէն դուրս փախչիլ, բայց ան ալ

ապագայ մը, որուն մտայ սարսուռով կը կը համակի խորհողին մարմինը:

Ինչ է այս հայկական պայքարունի ուղիները, եւ ինչպէ՞ս հաշտեցնել զայն դարուս ընկերակրական սկզբունքներուն հետ, որպէսզի իրաւունք ունենանք իրր ճշմարիտ ու յայնօրէն յատկաբան ժողովուրդ հրապարակի վրայ պարծիլ: Ահա՛ բուն, էական կէտք որուն համար Պ. Վարանդեան գրած ըլլալ կրեալ իր «Հայրենիքի գաղափարը»:

Ինչ էր յիշական պայքարին նպատակը: Արդէն անսանք, պաշտպանել աղաղակին իրաւունքները, ապահովել իր անկախ, ինքնավար գոյութիւնը, համերաշխօրէն ընթանալով միւս ազգութեանց հետ, սրուն, շահերն ու ձգտումները, երբ մաքուր են, արդէն կը համապատասխանեն իրենիններուն:

Նոյն նպատակը և նոյն ձգտումներն ունի նաեւ «հայկական շարժումը» և զայն ղեկավարող Հ. Յ. Դաշնակցութիւնը: Ան պարզապէս ընկերակրական կուսակցութիւն մը չէ, ու չի պիտի ուզեր ալ ըլլալ: Ամէն բանէ առաջ ազգային ինքնավարութիւնը իր դաւանանքներուն անկրկնաբար

նոյն վիճակին կ'ենթարկուի, և զինուորները կը յափշտակեն զարգերը:

Հրդեհուած փողոցին մէջ 57 յունական տուններ զինուորներու և խուժանի ձեռքով թալուեցան: Այժմ, որպէս զի ողբերգական կօմէտիան կատարեալ ըլլայ, ամէն մէկ քաղաքացի մէկ մէկ զինուորաւոր տունէ տուն կը շրջին իրենց կողոպտուած կարասիներն ու աւարկաները փնտրելով: Մինչդեռ անդին թուրք զօրքերը համարձակօրէն սակեզօժ գրգռներ և տեսակ տեսակ կարասիներ կը ծախեն փողոցներու մէջ...:

Ահա մեր կողմերու կեանքը և արդարութիւնը:

Անվերջի հարուստ մը, խրդեւած խեղճ վնասուած ժողովուրդին 300 ոսկի նպաստ ցրուեց անոնց, իսկ թուրք հայրախնամ կառավարութիւնը՝ չ'միայն ինքը մէկ փարսլով չ'օգնէր, կամ գոնէ իր զօրքերու կողոպտած կարասիները ետ չ'ի գարձներ, այլ կ'աշխատի որ ինքն ալ մասուննայ այդ նպատակէն: ստոր արարածներ:

Վրաստան

Սուրբ 11 յուլիս 1904

Քանի մը օր առաջ ուսուսարական Պետարապոյ սահմանադրութիւն վրայ պատահեցաւ, որու չ'իմաստեղանքներու կողմէն վայրենութեամբ և վատաբանութեամբ խառն գեղեց մը:

Պետրոյնայի շրջակայ Ձոնսվեց քաղաքի հայ անկախներէն աղաղակ Յարութիւն Անարուշկայ ազգայինը, մէկ երկու ամսուան համար կը փափայի իր 10-14 տարեկան երկու տղաքը Ռուսիա տանիլ: Երբ ուսաս

է: Ան կը բաղձայ հայկական գաւառներու և անոր շրջանակներուն մէջ բնակող ազգերով դաշնակցական հանրապետութիւն մը հիմնել, որ սաղմն ըլլայ միջազգայնութեան ապագայ կազմակերպութեանց: Ահա թէ ինչպէս կամփոփէ Պ. Վարանդեան Հ. Յ. Դաշնակցութեան դերը հայկական կեանքին մէջ:

Սօցիալիստական նորաբողոք շարժումին Հ. Յ. Դաշնակցութիւնը կը բերէ իր գործօն աջակցութիւնը, սակայն այդ շարժումը չէ կարող չեղել և չպէտք է չեղէ նրան իր կենդանական մտահոգութիւնից, որ է ազգային պաշտպանութեան գործը:

Այս է Պ. Վարանդեանի գրքին պարունակութիւնը, Հեղինակը, ինչպէս տեսանք, ջանալով պատշաճեցնել մեր ներկայ հոգեկան տրամադրութիւններուն գիտական ընկերաբանական սկզբունքները, ազգերու գոյութեան խնդիրը բոլորովին մութ ու անորոշ բացատրութիւններու մէջ արտայայտած էր: Սակայն հեղինակը իր այդ աշխատութեամբ ուզած է հակազդել անցեալները կողկաստանոց մէջ երեւան եկած տեսակ մը սեւ ապագայանցման ձգտումներուն, որոնք

կան սահմանադրուի կը հասնի, մաքսատան պաշտօնեան յիշալին անցագրերը անեղով կը յայտարարէ. «Ինչ չէ՞ք լսած որ մեր կայսրը հրամայած է թէ հայ լուսաւորչակաւորութեան պատկանող ոչ մի անհատ չէ կարող սակէ վերջը մեր կայսրութեան հողին վրայ ոտք դնել: Եթէ դուք Ռուսիա մտնելու պէտք ունիք, պէտք է մեր կրօնքը փոխէք, և Աւստրիայ կառավարութիւնը պաշտօնապէս պէտք է վաւերացնէ մեր տարբեր դաւանանք մը ընդունած ըլլալը»:

Այս կարուկ յայտարարութեան վրայ շուարած՝ ետ կը դառնայ, կը դիմէ ուսմէն քահանային, տղոց ծննդեան վկայագրերը կը փոխէ ու պէտք եղած ձեւակերպութիւններն ալ կատարելով Աւստրիական կառավարութեան կը վաւերացնէ թէ իր տղաքը հայկական եկեղեցին ձգած և ընդունած են Օրթոքսոքսութիւնը:

Այս զէպքը մենք հրապարակ հանելով, կուզենք մեր հայ ազգակիցներուն և գլխաւորապէս եկեղեցական իշխանութեանց ուշադրութիւնը հրաւիրել այս կէտին վրայ, Գուցէ ապագային այս տեսակ զէպքեր շատ պատահին: Ո՞վ պիտի առաջն առնէ անոնց:

Վերջապէս մենք արթուն հովիւի մը պէտք ունինք, որ սխալեցնէ մեր Աւստրիայ և Ռուսիայի կայսրը որոնց համար ազգութիւնն ու կրօնքը շատ ջնջին նշանակութիւն ունին, և որոնք կրնան իրենց շարժիկին պէս փոխել նաեւ կրօնքին:

Իսկ աղաղակ Անարուշկան, ինչպէ՞ս դուք յանձն առիք այս վատութիւնը հանդէպ մեր ազգին: Գոնէ բանաստեղծին խօսքերը չ'իջեցիք երբէք, որ կրէք:

Ով որ իր ազգն ուրանայ  
Երկու աչքէն կուրանայ  
Յեանն ազգաբնիկն  
Ինչ է ի դուռ մուրանայ:

Վերջապէս, Սուրբ 11 յուլիս կը ցանկանք Ամերիկայի վարդապետներէն մէկը իրր մշտնջենական քարոզիչ այս կողմերը բերել: Տեսնենք ինչ պիտի ըլլայ:


Շաւարշ Մեծիկեան

թիւն կուսար իր ազգային գործերը վարելու այս բողոքը կատարուեցան անանկ արագութեամբ: անանկ խորութեամբ, որ ցոյց տուին հայութեան հիմնական ընդունակութիւնները եւ դեռ երիտասարդ ուժերը: Խաղաղ աստիճանական յեղաշրջումին յաջորդեց բուն գիտեալ զօրութիւնը, ուսմական բողոքը, իսկ բնական սպասարկութիւնը տիրող բունակալ կարգերու, անհասարակութեան եւ հարստահարութեան դէմ: Ձեյթիմը անոր առաջին ազգարար եւ քաղաքական նշանը տուաւ: Օրինակը շուտով վարակուեցաւ եւ ամբողջ հայկական աշխարհը բռնկեց: Հարկ չենք համարիլ այնքան թարմ այդ նոր շրջանին զէպքերը եւ հետեւանքները հոս մանրամասնել: Անոնք ընթացողին Երեւակալութեան մէջ զեռ շատ թարմ են եւ վերջումն ալ պէտք չունին: Անցընենք որ նոյն երեւոյթները նշարարուեցան նաեւ կողկաստանայ աշխարհին մէջ, ուր անակնկալ, կասայական օրէնք մը եկաւ յեղաշրջել ամբողջ խաղաղ բնակչութեան մը կենսաղը: Եւ կողկաստանութիւնը ցնցուեցաւ: արիւնալի տեսարաններ իրարու յաջորդեցին նշարել տալով

ընկերակրութեան անունով կը պարտկուէին: Հին հնչական կուսակցութիւնը կը շահագործէր ու կը քաղաքներէր զանոնք իր գոյութեան պահպանումին համար, և իր հակապատկան հրատարակութիւններով տրամադրութիւնները կը խանգարէր: Ուստի պէտք էր որ Պ. Վարանդեան ցոյց տար թէ ընկերակրականութեան հետեւող մը ըլլալով հանդերձ այսօր ամէն հայ ձգտելու է իր ազգային ինքնավարութեան իրականացումին, և իր բոլոր ճիգերը անոր վրայ կեդրոնացնելու է: Պ. Վարանդեան իր այդ նպատակը յաջողապէս գործադրած ըլլալով, ամէն դաշնակցական մասնաւոր պարտաւոր է կարգաւ «Հայրենիքի գաղափարը», որպէս զի ընկերակրական քարոզներու առջեւ չ'իջի իր և կարողանայ ընկերակրութեան և ազգային ինքնավարութեան փոխադարձ կապերը լաւ մը ըմբռնել:

Ի՞նչ

ՎԵՐՋ



ՊԼԵՂՎԷ

Լուրեր կան, որոնք արշալոյսէն աւելի գեղեցիկ են ու գարունէն աւելի քաղցր, լուրեր, որոնք մահամերձներուն կեանք կուտան ու հալածուածները գերեզմանի ու քարոյի ճամբաներէն ետ կը կանչեն, նմանօրինակ լուր մըն է, որ կը հասնի այսօր Պետերսպոլսէն՝ աւերելով աշխարհին Պլեհզէն ըստած հրեշիւն ոչնչացումը ուսմբի մը հարուածով։ Այն բազուկները, որոնք հերոսական վճռականութիւնն ունեցան վերջապէս արգարութեան հարուածը իջեցնելու, պէտք էր որ արդէն շատոնց բարձրացած ըլլային, բայց լաւ է ոչ, քան երբէք։

Աստուած իմ, ի՞նչ երջանիկ ցնծութիւն է, որ կ'ելեկտրակաշնացնէ այսօր ամբողջ Ռուսաստանը, և կը գոհացնէ բովանդակ աշխարհի այն հոգիները, որոնք բարեկամ են ազատութեան և քաղաքակրթութեան։ Միայն Դալիցիներն են, որոնք արցունք կը թափեն Պլեհզէի մը գիակիւն վերայ, բայց և որոնց արցունքները նոյնիսկ Պլեհզէներու համար օկեղծ են։ Ազատութեան, արգարութեան և իրաւունքի լայն պողոտաներուն վրայ ընկած ժայռ մ'էր ան, որ իր վրայէն անցնել փորձող յանդուգներուն իրենց կեանքի գնով տուժել կ'ուտար, և որ այսօր ուսմբի մը ճակատագրական հարուածով օդը կ'ելլայ՝ ճամբայ բանալով անոնց, որոնք քաղաքակրթութեան քառուղիներով քայլել կ'ուզեն։

Բորբիքով, Անտրէեկ, Պլեհզէ, ահա առասպելի հազար գլխան հրեշի գլուխները, որ մեր օրով բռնութիւն կը կոչուի։

Լացն ու ծիծաղը քոյրեր են, ինչպէս արեւն ու անձրևը։ Ինչպէս որ բնական է լալը, նոյնքան և բնական է ծիծաղիլը։ մէկը միւսին միշտ կը յաջորդէ։

Երեկ անոնք էին, որ կը խնդային իրենց ոճիրներուն մէջ։ Չարէն քաջաբերուած՝ անպաշտպան զոհեբու հոգիները դաղելով, այսօր ալ իրենց զոհեր են, որ կը խնդան և աւա՛ղ, իրենք գոյութիւն չունին, որ լալ կարողանան։

Սուրբէ մը աւելի պայծառ է այն խիզախ ահաբեկիչը, որ միլեծնաւոր ուսեր կազատէ զարշահոս բռնէ մը, զայն անէութեան անդուգ գլորելով։ Բայց այս գեռ երկունքի սկիզբն է, Պլեհզէ հրեշիւն սպաննումը գեռ ազգանշանն է այն ահեղ ու արհաւիրքներով լեցուն ընդհանուր շարժումին, որ Ռուսաստանին կը սպառնայ։ Արգեօք արգարութեան համար բարձրացող

բազուկները ուսմբիով շարունակե՞ն խօսել բռնակալութեան հետ... Արգեօք մենք երեկ կապրի՞նք հանուր աշխարհի արգարութեան արեւով լուսաւորուած ազատ վազորդայնի... Այնչ չի կարելի ըսել գեռեւս, Սակայն ժամանակը, ուր մենք կապրինք, յղի է այնպիսի անակնկալներով, որոնք պատմական բոլոր օրէնքներէն գուրս իրենց յայտնութիւնով աշխարհը կապչեցնեն։

Դեռ սպասենք, վստահ լինելով, որ ինչ ալ որ ըլլայ արգարութիւն է, որ պիտի յալթէ, և բռնակալութիւնը ուզէ չուզէ տեղի պիտի տայ իր ճակատագրական ժառանգին՝ քաղաքակրթութեան։

ՀԵՆՈՒՎԻՐ

Յուլի 5 յուլիս (Հեղա-կերպական զոմով)

Յուլիսի 7-ին Բասենի մէջ յայտնեց Անդրանիկի ընկեր Կայծակի ձիաւոր խումբը, որը ունեցաւ զորքերի և քիւրդերի հետ մի խիստ ընդհարում։ Ապստամբները աղող դիրքեր բռնեցին վերջին ուսմբի բազուկան պատերազմի միջոցին հաշակաւ Զիվինի բերդի աւերակներէ մէջ։ Կրօնը շարունակեց մի օր, Հաւաքեցին 4000-ից աւելի զօրքեր և քրդեր, որոնք մի քանի անգամ փորձեցին գրոհ տալ ու դիրքերը վերցնել, բայց մեծամեծ կորուստներ տալով տեղացող ուսմբից և յօսիսի գնդակներով՝ յետ նահանջեցին։ Կրօնը յուսահատական դարձաւ իրիկնապահին, մի քանի դիրքերից կատարւած յարձակումները դարձաւ յետ մղեցին, թշնամին թողեց դաշտի մէջ՝ բազմաթիւ դիակներ, Զիաւոր խումբը 25 զոհ տուց։ Մնացածները գիղերային մթութեան շնորհիւ՝ պատուեցին շղթան և անդան։ Թշնամու կորուստը հաշուով է 3-400, Սարափը անկարգութիւն է, Հէնց այժմ լուր հասաւ, որ կենդանի մնացած ապստամբները շարունակուած են կուել։

(Դրօշակ)

Մ. Ս. Այս ճակատամարտի մէջ սպաննուած է Վարնացիներին լուծանօթ Սայիկ ժամակոչանը (նշան) մի ընդունակ նկարիչ և շատ համակրելի երիտասարդ։

Միւս համարում կը խօսինք Սաշիկի անձնաւորութեան մասին, որը քաջութեան և ազնւութեան տիպար էր։

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

Պոլսէն Վիէննա կը հեռագրեն թէ Բ. Դուռը Անդրանիկի դուլսը 1000 սկիբի գնահատած է, — «Պելին. Թագը» Պոլսէն կիմանայ թէ Հայաստանի մէջ նոր ապստամբութենէ մը կը վախցուի։ Դեպքանները տեղեկութիւն ստացած են որ Մուշ քաղաքը բոցերու մէջ է. և բնակչութեան մէկ մասը ջնջուած է։ — Վիէննայէն մասնաւոր հե-

ռագրով պուլկար «Վեջ. Բոշթա» թերթին կը հաղորդեն թէ յուլիս 13էն սկսեալ Մուշի մէջ կոտորած կայ. սպաննուած են իբր թէ բնակչութեան մէկ մասը, շատ մը միսիօնարներ և հայ հոգեւոր պետեր։ Գիւրտերը թալանի սկըսած են թէ քաղաքէն մէջ և թէ շրջակաները։ Նոր կոտորածներու լուրեր կը ստացուին ամբողջ Հայաստանէն։

Մ. Ս. — Այս լուրը վերապահուած է կը հրատարակենք, որով հետեւ ուրիշ աւելի լուրջ ազբիւրներէ հաղորդուած չէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Պէրլինէ Թագը» թերթը Պոլսէն ստացուած հետեւեալ հեռագիրը հրատարակած է.

«Ամերիկեան և անգլիական զօրեղ նաւատորմի զինք խարխիսնետած են Տարտանէլի դիմաց, իբր թէ Ամերիկացիք եկած են ցոյց բնելու հայկական նախորդ կոտորածներուն պատճառով տեղի ունեցած վնասներու հատուցումը ստանալու համար։

— Պոլսէն «Թանաթի կը հեռագրեն հետեւեալը.

Մակեդոնիական եկած տեղեկութիւնները բոլորն ալ կը մատնանշեն ժողովրդին բարկութիւնը և կը նախատեսեն ընդհանուր ապստամբութիւն ոգոտուի վերջերը, հունձքէն յետոյ։

— Սելանիքէն Վիէննա կը հեռագրեն թէ այդ տեղի կայարանը ձերբակալութիւն են երկու պուլկար ուսուցիչներ և ուսանողուհի մը որոնք կը թալանին Իւսկիւր և Եէնիճէ։

Չերբակալուածներուն քով գրտեր են կանկաւածելի թուղթեր։

— Յուլիս 14ին Պոլսէն կը հեռագրեն թէ՝ Անգլիոյ ցանկութեան համաձայն թոյլ չը պիտի տրուի ո՞ր ուսուցիչը Մալկան թերթական նկույններէն անցնեն։

Բ. Դուռը գիմած է ռուս դեսպանին խնդրելով և յանձնարարելով որ երկու կառավարութիւնները իրարու մէջ համաձայնին. Դեսպանը պատասխանած է թէ, Մալկան Լիբան պիտի տարուի և հաղորդեր է նաեւ որ Մալկայի խնդրը այնպէս պիտի կարգադրուի որ Բ. Դուռն ալ գոհ մնայ։

ՌՈՒՍԻԱ

Ռուսներին գործոց նախարար, Բլէզէի սպանութեան մասին Պուլկ. հեռ. գործակալութիւնը հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ։

Բլէզէ կառքով Չարասթէ Սէլօ կերթար Վլատիմիր մեծ դուք-

սին տարեգարձը շնորհաւորելու, եւ Վարշաւայի կամուրջին մօտերը ճաշարանի մը պատահանէն երիտասարդ մը ուսմբը արձակեց, Ռուսը ճիշդ կառքին վրայ ինկաւ ու պայթելով Բլէզէի մարմինը կտոր կտոր բրաւ, գլուխը իրանէն անջատուեցաւ, ամբողջ կառքը խորտակուեցաւ։ Ռուսը ձեռքը ձերբակալուեցաւ եւ ճաշարանէն դուրս կելլէր, Հեռագիրը չի հաղորդեր թէ ինչ ազգէ էր։

ՌՈՒՍՈՒՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

— Ըստ Գուրոբաթիինի Սարին ուղղած հեռագրին՝ Թաշիշուանի քով թէ ուսուցիչը և թէ ճարտարագիտներ մեծ կորուստներ ունեցեր են։ Երկու ուսուցիչները կան վերադարձուած, Թաշիշուան գրառուած է՝ ճառնացիներէն։

— Մուկաչիւի և Լեւոսեանկի մէջ ջիւրը կատաղի ճակատամարտ կը մղուի։ Այս ճակատամարտի ելքէն կախուած է Լեւոսեանկի վերջը, Եթէ ճառնացիներ յաջողին Գուրոբաթիին իր զօրքով պիտի կարուի միւս զօրքէն, հա կառակ պարագային Գուրոբաթիինի նահանջը ապահովուած է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— ( օ ) —

Պատիւ ունիմ յայտարարել Վաւայի յարգոյ հասարակութեան, որ 32 ՏՆՐՈՒՄՈՒՄ փորձառու լուսակալի լինելովս, երկար տարիներէ ի վեր հաստատուած եմ Ռուսոյնքի մէջ, ուր ունիմ կանոնաւոր լուսակալչատուն։ Այժմ եկած եմ Վաւայ, մի լուսակալչատուն եւս հաստատել, ՏՆՐՈՒՄ փողոցի մէջ, Հայ օրերողաց վարժարանի մօտ։ Պատկեր կը հանեմ Գեղեցիկ և ԵՒՐՈՊԱՅԱՆ ճաշակով։

Պատկեր կը հանեմ ամէն մեծութեամբ և զանազան գոյներով ընդհանրապէս և պատիւնի թղթի վրայ, Փոքր պատկերները կը մեծացնեմ (պոստմոնտաճ), հին պատկերները վրայից նորը կը հանեմ. նոյնպէս և մեծ փոքր խումբեր կը հանեմ, ամենայն գեղեցկութեամբ։

Կը յուսած թէ՝ ամէնազօտարահաւան յաճախորդներու եւս կը կանգնեմ, իմ հանելիք գեղեցիկ լուսակալներովս։

Իմ լուսակալչատանս մէջ պատկեր կը հանեմ ամէն օր, առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյան ժամը 10։

Փափաքողաց, պատկեր հանելոց յետոյ, երկու օրէն 1 հատը ցոյց կը տրուի իբր օրինակ։

Պատկերները գիններ չստիւար, ու ամէն մարդու համար դիւրամատչելի են։

ԼՈՒՍԱԿԱՐԳՑ Օ՝ ՄԵՍՐՈՎԻՐ

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна